

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ծննդոցին մէջ՝ Յիսուս Քրիստոս Կեանքի շունչն է  
Ելքին մէջ՝ Մեր Զատկուան Գառնուկն է  
Ղեւտացոցին մէջ՝ Մեր Քահանայապետն է  
Թուոցին մէջ՝ Մեր կեանքը առաջնորդող ցերեկուան Ամպի Սիւնն է, իսկ գիշերուան՝ Կրակէ  
Սիւնը  
Երկրորդումն Օրինացին մէջ՝ Մովսէսի նմանող մարգարէն է  
Յեսուին մէջ՝ Մեր փրկութեան Առաջնորդն է  
Դատաւորացին մէջ՝ Մեր Դատաւորն ու Օրէնստուն է (Օրէնքը տուողը)  
Հռութին մէջ՝ Մեր Ազգականն ու Փրկիչն է  
Ա. եւ Բ. Թագաւորացին մէջ՝ Մեր վստահելի Մարգարէն է  
Գ. եւ Դ. Թագաւորացին ու Ա. եւ Բ. Մնացորդացին մէջ՝ Մեր Տէրն ու Թագաւորն է  
Եզրին եւ Նեհեմիային մէջ՝ Մարդկային կեանքին քանդուած պարիսպները Վերաշինողն է  
Եսթերին մէջ՝ Մեր Մուրթքէն է  
Յոբին մէջ՝ Յաւիտենապէս ապրող անվախճան Փրկիչն է  
Սաղմոսին մէջ՝ Մեր Հովին է  
Առակացին եւ Ժողովողին մէջ՝ Մեր Իմաստութիւնն է  
Երգ Երգոցին մէջ՝ Մեզ սիրող ճշմարիտ ու երկնաւոր Փեսան է  
Եսայիին մէջ՝ Խաղաղութեան Իշխանն է  
Երեմիային մէջ՝ Արդարութեան Որթատունկն է  
Ողբք Երեմիային մէջ՝ Ողբացող Մարգարէն է  
Եզեկիէլին մէջ՝ Քառակերպեան հրաշալի Մարդն է  
Դանիէլին մէջ՝ Բոցավառ հնոցին մէջ գտնուող չորրորդ Անձն է  
Ովսիային մէջ՝ Հաւատարիմ Ամուսինն է, յաւէտ ամուսնացած անուղղայ կնոջ հետ  
Յովէլին մէջ՝ Կրակով եւ Մուրթ Հոգիով Մկրտողն է  
Ամոսին մէջ՝ Մեր բեռն ու ծանրութիւնները Կրողն է  
Աբդիային մէջ՝ Մեր հզօր Ազատարարն է  
Յովնանին մէջ՝ Օտար մեծ Քարոզիչն է  
Միքեային մէջ՝ Գեղեցիկ ոտքերով Պատգամաբերն է  
Նահումին մէջ՝ Մեր Վահանն ու Զօրութիւնն է  
Ամբակումին մէջ՝ Աստուծոյ բարձրաղաղակ Քարոզիչն է  
Սոփոնիային մէջ՝ Մեր Փրկիչն է  
Անգէային մէջ՝ Աստուծոյ կորսուած ժառանգութեան Վերականգնիչն է  
Զաքարիային մէջ՝ Մեղքերն ու անմաքրութիւնները մաքրող Դաւիթի տան մէջ բացուած  
Աղբիւրն է  
Սաղաքիային մէջ՝ Բժշկութիւնն իր թեւերուն վրայ ունեցող Արդարութեան Որդին է

Մատթեոսին մէջ՝ Յիսուս Քրիստոս հրեաներուն Թագաւորն է  
 Մարկոսին մէջ՝ Ծառան է  
 Ղուկասին մէջ՝ Մարդու Որդին է, որ մեզի հետ կը զգայ եւ կը տառապի  
 Յովհաննէսին մէջ՝ Աստուծոյ Որդին է  
 Գործք Առաքելոցին մէջ՝ Աշխարհի Փրկիչն է  
 Հռոմայեցիներուն մէջ՝ Աստուծոյ Արդարութիւնն է  
 Ա. Կորնթացիներուին մէջ՝ Ժայռն է եւ Իսրայէլի Հայրը է  
 Բ. Կորնթացիներուին մէջ՝ Յաղթնակողն ու յաղթանակ Պարգեւողըն է  
 Գաղատացիներուն մէջ՝ Մեր Ազատութիւնն է - որովհետեւ մեզ մեղքի գերութենէն  
 ազատագրեց  
 Եփեսացիներուն մէջ՝ Եկեղեցիին Գլուխն է  
 Փիլիպպեցիներուն մէջ՝ Մեր Ուրախութիւնն է  
 Կողոսացիներուն մէջ՝ Մեր Կատարելութիւնն է (անոր մէջ կը գտնենք մեր ամբողջութիւնը)  
 Ա. եւ Բ. Թեսալոնիկեցիներուն մէջ՝ Մեր Յոյսն է  
 Ա. Տիմոթեոսին մէջ՝ Մեր Հաւատքն է  
 Բ. Տիմոթեոսին մէջ՝ Մեր Կայունութիւնն է  
 Տիտոսին մէջ՝ Ճշմարտութիւնն է  
 Փիլիմոնին մէջ՝ Մեր Բարեբարն է  
 Եբրայեցիներուն մէջ՝ Մեր Քահանայապետն է  
 Յակոբոսին մէջ՝ Մեր հաւատքը զսպանակող Զօրութիւնն է  
 Ա. Պետրոսին մէջ՝ Մեր Օրինակն է  
 Բ. Պետրոսին մէջ՝ Մեր Անարատութիւնն է  
 Ա. Յովհաննէսին մէջ՝ Մեր Կեանքն է  
 Բ. Յովհաննէսին մէջ՝ Մեզ Առաջնորդողն է  
 Գ. Յովհաննէսին մէջ՝ Մեր կեանքի մղիչ Ոյժն է  
 Յուդային մէջ՝ Մեր հաւատքի Խարխիսն ու Հիմքն է  
 Յայտնութիւն Յովհաննուին մէջ՝ Գալիք Թագաւորն է

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Առաջինն ու Վերջինն է, Այբը եւ Ֆէն, Սկիզբն ու Վախճանը,  
 Ստեղծագործութեան Պահապանն եւ ամէն ինչի Արարիչը: Տիեզերքի Ճարտարապետն ու  
 Ժամանակի Կարգաւորողը:

Ան միշտ էր, միշտ է եւ միշտ պիտի ըլլայ: Ան անշարժ, անփոփոխ, անայլայլ եւ  
 անյաղթահարելին է:  
 Իր վերքերով մենք բժշկուեցանք: Մեր սիրոյն՝ ան խոցուեցաւ, ցաւի տէր դարձաւ,  
 հալածուեցաւ, սակայն մեզի ազատութիւն բերաւ: Մեռաւ, բայց մեզի կեանք պարգեւեց:  
 Յարութիւն առաւ եւ մեզի յաւիտենական կեանքի յոյսն ու զօրութիւնը տուաւ: Համբարցաւ եւ  
 մեզի խաղաղութիւն շնորհեց:

Աշխարհը չի կրնար հասկնալ զինք: Զօրքերը չեն կրնար պարտութեան մատնել զինք:  
Դպրոցները չեն կրնար իր մասին բացատրութիւն տալ: Աշխարհի ղեկավարները չեն կրնար  
անտեսել զինք:

Հերովդէս չկրցաւ սպաննել զինք: Փարիսեցիներ չկրցան սպառել զինք: Մարդիկ չկրցան  
արգելք հանդիսանալ իրեն ու բռնել զինք: Ներոն Կայսրը չկրցաւ կասեցնել ու ճզմել զինք:

Ան Կենդանի է ու կ'ապրի: Ան միակ ու ճշմարիտ Սէրն է, Բարութիւնն ու Խոնարհութիւնն է:  
Կատարեալ Աստուածն է, Արդարութիւնն ու Սրբութիւնն է: Հօրն է, Ամենակարողը,  
Իշխանութիւնն ու Տէրութիւնն է: Անոր ճամբաները ուղիղ են, Խօսքը՝ անվախճան եւ  
յաւիտենական, Կամքը՝ անփոփոխ եւ իր զօրութիւնը իմ վրաս է եւ զիս կը հովանաւորէ:

Ան իմ Փրկիչս է, իմ Ազատարարս է, իմ Աստուածս է, իմ Ուրախութիւնս է, իմ Խաղաղութիւնս  
ու իմ Հանգիստս է: Ան իմ Տէրս է եւ յաւէտ կը թագաւորէ կեանքիս վրայ:

Յաւիտեանս յաւիտենից. ԱՄԷՆ: